

**ԳՎԱՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԵԿԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ  
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ  
(փոփոխություններով)**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՅՑՆԵՐ**

- 1) Սույն ընթացակարգը սահմանում է Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ) ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածուների առաջադրման, ընտրության անցկացման և դեկանին պաշտոնում հրամանագրման կարգը:
- 2) ԳՊՀ ֆակուլտետի գործունեությունն իր իրավասության սահմաններում կազմակերպում և ղեկավարում է դեկանը, որն ընտրվում է ԳՊՀ գիտական խորհրդի կողմից՝ բաց մրցույթի արդյունքում, փակ, գաղտնի քվերկությանը, 5 տարի ժամկետով և պաշտոնում հրամանագրվում է ԳՊՀ ռեկտորի կողմից:
- 3) Ֆակուլտետի դեկանի գործունեությունը համարվում է վարչական աշխատանք, և նա վարչական այլ պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի: Վարչական աշխատանքից բացի, ֆակուլտետի դեկանը կարող է իրականացնել մանկավարժական, հետազոտական գործունեություն:

**2. ԴԵԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՈՒՋԱԴՐՈՒՄԸ**

- 4) ԳՊՀ-ում կիրառվում է դեկանի թափուր պաշտոնի զբաղեցման մրցութային եղանակ:
- 5) Դեկանի թափուր պաշտոնի մրցույթի վերաբերյալ հայտարարությունը ձևակերպվում է ԳՊՀ ռեկտորի հրամանով, հրապարակվում է հանրապետական մամուլում և ԳՊՀ կայքում: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները և դիմումների ներկայացման վերջնաժամկետը՝ հայտարարության հրապարակումից հետո 30 օրվա ընթացքում:
- 6) Դեկանի պաշտոնի մրցույթին կարող են մասնակցել ՀՀ չափահաս, գործունակ քաղաքացիները, որոնք ունեն ֆակուլտետի ուղղվածությանը համապատասխանող գիտական աստիճան և (կամ) գիտական կոչում և առնվազն 5 տարվա գիտամանկավարժական աշխատանքի փորձ:
- 7) Դեկանի պաշտոնի թեկնածուն (թեկնածուները) առաջադրվում են ֆակուլտետի խորհրդի, ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կամ ինքնաառաջադրմամբ:
  - 7.1. Թեկնածուի (թեկնածուների) առաջադրումը ավարտվում է ընտրություններից առնվազն 15 օր առաջ:
  - 7.2. Առաջադրման արդյունքները և անհրաժեշտ փաստաթղթերը (համապատասխան ֆակուլտետի խորհրդի որոշումները կամ ինքնաառաջադրվողի դիմումը ռեկտորին, կադրերի հաշվառման անհատական թերթիկը, ֆակուլտետի զարգացման ծրագիրը, առաջադրված թեկնածուների գրավոր համաձայնությունները) ֆակուլտետի խորհրդի քարտուղարի կամ ինքնաառաջադրվող անձի կողմից ներկայացվում են ԳՊՀ գիտական քարտուղարին:
- 8) Դեկանի պաշտոնի հավակնորդների ցուցակը՝ ըստ այբբենական կարգի, որում նշվում են թեկնածուների (թեկնածուի) ազգանունը, անունը, գիտական աստիճանը և (կամ) կոչումը, զբաղեցրած պաշտոնը, ինչպես նաև նրանց առաջադրած ֆակուլտետի խորհուրդը (ինքնաառաջադրման դեպքում՝ նշում այդ մասին), ԳՊՀ գիտական քարտուղարը ԳՊՀ գիտական խորհրդի նիստից 10 օր առաջ հրապարակում է ԳՊՀ-ում և այդ մասին ծանուցում դեկանի թեկնածուին (թեկնածուներին):

### 3. ԳՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ԴԵԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

9) Դեկանի ընտրության օրակարգով գիտական խորհրդի բաց նիստը վարում է գիտական խորհրդի նախագահը:

9.1. Գիտական խորհրդի նիստը իրավազոր է խորհրդի կազմի առնվազն 2/3-ի ներկայության դեպքում:

9.2. Գիտական խորհրդի նիստում բոլոր որոշումներն ընդունվում են խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ (կեսից ավելի)՝ բաց քվեարկությամբ, եթե խորհուրդը որոշման ընդունման այլ կարգ չի սահմանում:

10) Հարցի քննարկումը նախագահողը սկսում է թեկնածուի (թեկնածուների) առաջադրման գործընթացի նախնական փուլի վերաբերյալ խորհրդի անդամներին տեղեկատվություն տալով:

10.1. Սույն ընթացակարգի էական խախտումներ ի հայտ գալու դեպքում գիտական խորհուրդը իրավասու է հետաձգել խորհրդի նիստը մինչև հատուկ որոշում կայացնելը:

10.2. Նախագահողը ներկայացնում է դեկանի թեկնածուի (թեկնածուների) ցուցակը:

11) Գիտական խորհրդի նիստին դեկանի թեկնածուի (թեկնածուների) ներկայությունը, որպես կանոն, պարտադիր է: Բացակայող թեկնածուի մասին, նրա գրավոր համաձայնության դեպքում, խորհուրդը, լսելով նախագահողի պարզաբանումները, ընդունում է որոշում թեկնածությունը նիստում քննարկելու կամ քննարկումից հանելու վերաբերյալ:

12) Նիստի նախագահողը ծրագրային ելույթի համար, ըստ ցուցակի, ձայնը տալիս է դեկանի պաշտոնի թեկնածուին (թեկնածուներին): Վերջիններիս ելույթի ժամանակը որոշում է խորհուրդը:

13) Յուրաքանչյուր թեկնածուի ելույթից հետո նախագահողի առաջարկությամբ խորհրդի անդամները և հրավիրված անձինք կարող են նրան հարցեր տալ: Հարցերը սահմանափակվում են նախագահողի առաջարկով, գիտխորհրդի որոշմամբ:

14) Թեկնածուի (թեկնածուների) ծրագրային ելույթներից հետո սկսվում է թեկնածության քննարկումը, որին կարող են մասնակցել ինչպես խորհրդի անդամները, այնպես էլ հրավիրվածները:

15) Քննարկման ժամանակ ելույթների համար հատկացվող ժամանակը որոշում է գիտական խորհուրդը: Անհրաժեշտության դեպքում նախագահողը գիտական խորհրդի համաձայնությամբ կարող է երկարացնել ելույթ ունեցողին հատկացված ժամանակը:

16) Թեկնածությունների քննարկումը դադարեցվում է նախագահողի առաջարկությամբ՝ գիտական խորհրդի որոշմամբ:

17) Քննարկումների ավարտից հետո թեկնածուին (թեկնածուներին) տրվում է լրացուցիչ ելույթի հնարավորություն: Ելույթի համար հատկացվող ժամանակը որոշում է գիտական խորհուրդը:

### 4. ԳՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

18) Քննարկումներից և լրացուցիչ ելույթներից հետո ինքնաբացարկ չհայտնած թեկնածուի (թեկնածուների) ազգանուններն ու անունները գիտական խորհրդի որոշմամբ ներառվում են քվեաթերթիկի մեջ:

19) Նախագահողը գիտական խորհրդի անդամներին ներկայացնում է փակ (զաղտնի) քվեարկության կարգը:

20) Նախագահողի առաջարկով փակ (զաղտնի) քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար, գիտական խորհրդի որոշմամբ՝ խորհրդի անդամներից ընտրվում է 3 հոգուց ոչ պակաս (կենտ թվով) հաշվիչ հանձնաժողով: Թեկնածուն (թեկնածուները) չի (չեն) կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների կեսից ավելիով:

21) Մեկ թեկնածուի դեպքում քվեաթերթիկի մեջ պետք է նշվի թեկնածուի ազգանունը, անունը, «Կողմ» և «Դեմ» բառերը (Հավելված Ա): Մեկից ավելի թեկնածուների քվեարկության համար քվեաթերթիկի մեջ այբբենական կարգով պետք է նշված լինեն թեկնածուների ազգանունը, անունը և վերջին տողում «Բոլորին դեմ են» նախադասությունը (Հավելված Բ):

22) Հաշվիչ հանձնաժողովը գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամի տալիս է մեկ քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացողը ստորագրում է գիտական խորհրդի անդամացուցակում:

- 23) Քվեարկությունն ավարտվելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն (Հավելված Գ): Մեկից ավելի թեկնածուների դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ հավաքած ձայների քանակի նվազման հաջորդականության:
- 24) Վավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում`
- ա) «Կողմ» կամ «Դեմ» բառերից մեկի դիմաց (միակ թեկնածուի քվեարկության դեպքում) կատարված է նշում,
  - բ) քվեարկված է միայն մեկ թեկնածուի օգտին կամ «Բոլորին դեմ են»-ի օգտին (մեկից ավելի թեկնածուների քվեարկության դեպքում):
- Որևէ թեկնածուի օգտին կամ «Բոլորին դեմ են»-ի օգտին քվեարկելու համար համապատասխան տողի վանդակում կատարվում է նշում (Հավելված Բ):
- գ) Մնացած դեպքերում, ինչպես նաև քվեաթերթիկում չնախատեսված նշումների, ընդգծումների և այլ նշանների առկայության դեպքում քվեաթերթիկը համարվում է անվավեր:
  - դ) Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը:
- 25) Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները յուրաքանչյուր թեկնածուի համար առանձին, որից հետո գիտական խորհուրդը հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:
- 26) Դեկանի թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է գիտական խորհրդի ներկա անդամների կեսից ավելին:
- 27) Գիտական խորհուրդը հաշվիչ հանձնաժողովի արձանագրության տվյալների հիման վրա ընդունում է հետևյալ որոշումներից մեկը`
- ա) ֆակուլտետի դեկան ընտրվելու մասին,
  - բ) կրկնակի քվեարկություն անցկացնելու մասին,
  - գ) ընտրությունները չկայացած ճանաչելու մասին,
  - դ) ընտրություններն անվավեր ճանաչելու մասին:
- 28) Մեկից ավելի թեկնածուների դեպքում որևէ թեկնածուի կողմից գիտական խորհրդի ներկա անդամների ձայների կեսից ավելին չհավաքելու դեպքում գիտական խորհրդի նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են`
- ա) առավելագույն ձայներ ստացած առաջին երկու թեկնածուները կամ`
  - բ) առավելագույն ձայներ ստացած առաջին թեկնածուն և նույնաքանակ ձայներ ստացած երկրորդ ու հաջորդ թեկնածուները կամ`
  - գ) հավասար առավելագույն ձայներ ստացած երկու և ավելի թեկնածուները:
- 29) Կրկնակի քվեարկությունը կազմակերպվում է սույն ընթացակարգին համապատասխան: Կրկնակի քվեարկության դեպքում ընտրված է համարվում գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնություն ստացած թեկնածուն:
- 30) Դեկանի ընտրությունը համարվում է չկայացած, եթե`
- ա) դեկանի պաշտոնի միակ թեկնածուն չի ստացել գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը,
  - բ) կրկնակի քվեարկության արդյունքով որևէ թեկնածու չի ստացել գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը:
- 31) Դեկանի ընտրական գործընթացն արտացոլող բոլոր փաստաթղթերը ֆակուլտետի խորհրդի նիստի արձանագրության հետ միասին ներկայացվում է ռեկտորին:
- 32) Դեկանի ընտրությունների գործընթացում ՀՀ օրենքների, այլ իրավական ակտերի, ԳՊՀ Կանոնադրության և սույն ընթացակարգի խախտումներ ի հայտ գալու դեպքում ռեկտորը գրավոր, պատճառաբանված որոշմամբ, ԳՊՀ գիտական քարտուղարին է վերադարձնում ֆակուլտետի դեկանի թեկնածուի գործը` գիտական խորհրդում 10-օրյա ժամկետում կրկնակի քննարկելու և քվեարկելու համար:
- 33) Առանձնահատուկ (նոր ստեղծվող ֆակուլտետ, դեկանի պաշտոնի թեկնածության բացակայություն, ընտրությունը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու) դեպքերում ռեկտորն իրավասու է մինչև 1 տարի ժամկետով դեկանի պաշտոնում հրամանագրել սույն ընթացակարգի 6-րդ կետում սահմանված պահանջները բավարարող անձի և հրամանագրման ժամկետի ավարտին կազմակերպել դեկանի ընտրությունների նոր գործընթաց:

## 5. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԶՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ

- 34) ԳՊՀ ռեկտորը ընտրված թեկնածուի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր և նրան հրամանագրում է ֆակուլտետի դեկանի պաշտոնում` 5 տարի ժամկետով:
- 35) Նույն անձն իրավունք ունի զբաղեցնելու ֆակուլտետի դեկանի պաշտոնը ոչ ավելի, քան երկու ժամկետ անընդմեջ:
- 36) Ֆակուլտետի դեկանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում ռեկտորը գիտական խորհրդի որոշման հիման վրա նշանակում է դեկանի նոր ընտրություն` սույն ընթացակարգի համաձայն:

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ  
ՔՎԵԱԹԵՐԹԻԿ**

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի \_\_\_\_\_  
*տարեթիվ, ամսաթիվ*

նիստում (արձանագրություն թիվ \_\_ ) ԳՊՀ \_\_\_\_\_  
*ֆակուլտետի անվանումը*

ֆակուլտետի դեկանի փակ (գաղտնի) քվեարկության.

\_\_\_\_\_  
*թեկնածուի ազգանուն, անուն*

Կողմ

Դեմ

\_\_\_\_\_  
\* Քվեարկության համար վանդակներից մեկում կատարվում է **V** նշագրումը:

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ**

**ՔՎԵԱԹԵՐԹԻԿ**

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի \_\_\_\_\_  
*տարեթիվ, ամսաթիվ*

նիստում (արձանագրություն թիվ \_\_ ) ԳՊՀ \_\_\_\_\_  
*ֆակուլտետի անվանումը*

ֆակուլտետի դեկանի փակ (գաղտնի) քվեարկության.

1. \_\_\_\_\_ Կողմ  Դեմ   
*թեկնածուի ազգանուն, անուն*

2. \_\_\_\_\_ Կողմ  Դեմ   
*թեկնածուի ազգանուն, անուն*

3. \_\_\_\_\_ Կողմ  Դեմ   
*թեկնածուի ազգանուն, անուն*

4. \_\_\_\_\_ Կողմ  Դեմ   
*թեկնածուի ազգանուն, անուն*

«ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ»

\* Քվեարկության համար վանդակներից մեկում կատարվում է **V** նշագրումը:

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
հաշվիչ հանձնաժողովի նիստի  
**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ \_\_\_\_**

Հաշվիչ հանձնաժողովը ընտրվել է ԳՊՀ գիտական խորհրդի « \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 թ.  
թիվ \_\_\_\_ նիստում (արձանագրություն թիվ \_\_\_\_ ) հետևյալ կազմով՝

1. \_\_\_\_\_  
*ազգանուն, անուն*
2. \_\_\_\_\_  
*ազգանուն, անուն*
3. \_\_\_\_\_  
*ազգանուն, անուն*

Գիտական խորհրդի \_\_\_\_\_ անդամներից ներկա էին \_\_\_\_\_ -ը:  
Քվեարկվել է (են) \_\_\_\_\_ ֆակուլտետի ղեկանի պաշտոնի  
*ֆակուլտետի անվանումը*

թեկնածությունը (ները):  
Քվեարկությանը մասնակցել են գիտական խորհրդի \_\_\_\_\_ անդամներ:  
Բաժանվել է \_\_\_\_\_ քվեաթերթիկ:  
Քվեատուփում առկա է \_\_\_\_\_ քվեաթերթիկ:  
Քվեարկության արդյունքներն են՝  
Մեկ թեկնածուի դեպքում՝

թեկնածուի ազգանունը անունը	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ

Մեկից ավելի թեկնածությունների դեպքում՝

թեկնածուի ազգանունը անունը	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ
թեկնածուի ազգանունը անունը			
թեկնածուի ազգանունը անունը			
թեկնածուի ազգանունը անունը			

«ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ» քվեաթերթիկների քանակը \_\_\_\_\_:

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով \_\_\_\_\_  
*ազգանուն, անուն*

ընտրված է (չի ընտրված) \_\_\_\_\_ ֆակուլտետի ղեկանի պաշտոնում:  
*ֆակուլտետի անվանումը*

Կամ՝

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով \_\_\_\_\_ ֆակուլտետի  
*ֆակուլտետի անվանումը*

ղեկանի պաշտոնի թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում ղեկանի պաշտոնում, իսկ  
ներքոհիշյալ թեկնածուները՝

1. \_\_\_\_\_  
*ազգանուն, անուն*
2. \_\_\_\_\_  
*ազգանուն, անուն*

մասնակցում են կրկնակի քվեարկությանը:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝  
Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

*(ստորագրություն, ազգանուն, անուն)*

1. \_\_\_\_\_  
*(ստորագրություն, ազգանուն, անուն)*
2. \_\_\_\_\_  
*(ստորագրություն, ազգանուն, անուն)*
3. \_\_\_\_\_  
*(ստորագրություն, ազգանուն, անուն)*